Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ա. Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիա 5-րդ դասարան (2 դասաժամ), տեխնոլոգիա (1 դասաժամ տղաներ,աղջիկներ), աշխարհագրություն (12 դասաժամ), ռուսերեն (27 դասաժամ), երաժշտություն (6 դասաժամ), հայոց լեզու և գրականություն (11 դասաժամ), բնագիտություն (2 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ս/թ նոյեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 28 –ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. Դեկտեմբերի 4-ին՝ ժամը 14:00-ին**, <<Ա.Սարգսյանի անվան Տեղի N1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում :

Հասցե՝ Տեղ համայնք, գ.Տեղ Ս.Բարխուդարյան 7: Տեղեկությունների համար զանգահարել 0284967-44 հեռախոսահամարով: